ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԳԻՐԸ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՌԻԹՈՎ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՂՋՈՅՆԻ

ԳԵՐԱՇՆՈՐՀ
Տ. ՍԵՊՈՒՀ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՐԳԻՍԵԱՆ
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ

ԱՆԹԻԼԻԱՍ

Սիրելի Սրբազան,

Շնորհակալութեամբ ստացանք Ձեր նամակը, որով կը յայտնէք որ Կիրակնօրեայ դպրոցներու տարեկան համագումարը տեղի պիտի ունենայ ամսոյս 5-12ի ժամանակամիջոցին Պիքֆայայի մէջ:

Ընդառաջելով Ձեր փափաքին՝ Ձեզի և համագումար-խորհրդակցական ժողովի մասնակիցներուն կը յղենք Մեր հայրական սիրոյ ողջոյնը և սրտագին մաղթանքը արդիւնալից նստաշրջանի մը համար:

«*Մանչնալ Հայց. Եկեղեցին*» կարգախօսով բացուող համագումարը վստահաբար առաջ պիտի բերէ աւելի խոր գիտակցական վերաբերում հանդէպ մեր պաշտելի Հայ Եկեղեցիին: Այդ *գիտակցութիւնը* անպայման պիտի վերածուի *պատասխանատուութեան* Կիրակնօրեայ դպրոցներու առաքելութեան նուիրուած անձերուն համար:

Ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ կ'աղօթենք որ համագումարը դառնայ աստուածահաճոյ գործունէութեան մղիչ ոյժ մը բոլորիդ համար անխտիր:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

4 Սեպտեմբերի 1998
ի Ս. Էջմիածին